ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայում

Կատարող՝ Խաչատրյան Սաթենիկ Ռազմիկի

/անուն, ազգանուն, հայրանուն /

«Գյումրու թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, դասվար

/դպրոց, մասնագիտություն, ըստ վերապատրաստման խմբի/

Ղեկավար՝ Անահիտ Փարկիթյան

/անուն, ազգանուն/

ԳՅՈՒՄՐԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայում……5

Եզրակացություն……..……16

Գրականության ցանկ……..……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհը անընդհատ փոխվում է մարդկային գործունեության արդյունքում: Մեզանից յուրաքանչյուրը պետք է մտածի երեխաների ապագայի մասին և ստեղծի այն միջավայրը, որտեղ երեխաները լինեն առողջ, համարձակ, պատասխանատու և կշռադատեն իրենց քայլերը:

Մենք պետք է օգնենք երեխաներին՝ հետազոտելու և վերլուծելու այն գործընթացները, որոնք ներգործունեություն ունեն ապագայի ձևավորման վրա: Ուղղորդենք աշակերտներին, որպեսզի կարողանան գիտակցված և պատասխանատվությամբ գործեն, նպաստեն հայրենիքի զարգացմանը և ավելի լավ ապագայի կերտմանը:

Բնապահպանական դաստիարակության հիմքերը դրվել են դեռևս հասարակության ձևավորման արշալույսին: Բնապահպանական դաստիարակությունը երեխայի մեջ շրջակա միջավայրի գիտակցական ընկալման, բնապահպանական գիտակցության, համապատասխան գիտելիքների, մշակույթի և պահանջմունքների ձևավորման, բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի, բնական պաշարների մտածված ու խելամիտ օգտագործման, նրա պաշարների բազմապատկման գործընթաց է: Այսօր անհրաժեշտ է աշակերտներին իրական օգնություն ցույց տալ՝ բնության վերաբերյալ իրենց արժեքային կողմնորոշումների հստակեցման ուղղությամբ, որպեսզի հնարավոր լինի հաղթահարել բնական աղետների հետևանքները:

Տարրական դպրոցում բնության տարրերի ու երևույթների ուսումնասիրությունը, սովորողի աշխարհայացքի համակարգված ձևավորմանը զուգահեռ, պետք է հնարավորություն ընձեռի բնության մեջ, դասարանում կամ տանը դիտումների, փորձերի և այլ տարաբնույթ գործնական աշխատանքների միջոցով սովորողի մեջ զարգացնելու Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ճանաչողության մեթոդները:

Աշխատանքը միշտ կմնա արդիական, քանի որ բոլոր ժամանակաշրջաններում հասարակությանը անհրաժեշտ են պատասխանատու վարքագծով մարդիկ, այդ պատճառով էլ այն մեթոդները, որոնք կօգնեն ճիշտ դաստիարակել երեխաներին,

կմնան ուշադրության կենտրոնում:

Աշխատանքի նպատակն է ցույց տալ և բացատրել այն մեթոդները, որոնց օգտագործելը <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դասավանդման ժամանակ կնպաստեն անձի և պատասխանատու վարքագծի ճիշտ ձևավորմանը: Աշխատանքն ունի հետևյալ խնդիրները՝

1. Ցույց տալ <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի կարևորությունը երեխաների դաստիարակության մեջ:
2. Խոսել այն մեթոդների մասին, որոնք կօգնեն անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, մեկ գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՆՁԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԱՐՔԱԳԾԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԸ <<ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ>> ԱՌԱՐԿԱՅՈՒՄ

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը կոչված է օգնելու երեխային ճանաչելու իրեն ոչ միայն որպես անհատի, այլև որպես հասարակության անդամի: Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը:

Կերպարվեստ, տեխնոլոգիա, մայրենի, մաթեմատիկա, երաժշտություն առարկաները նպաստում են աշակերտի շրջակա միջավայրի գեղագիտական ընկալմանը, բնության հետ հաղորդակցվելու ընթացքում բարության և գեղեցիկի զարգացման ամրապնդմանը: Մանկական տարիքում երեխայի վրա ավելի շատ ազդում է բնական միջավայրի ոչ թե մտային, իմացական, այլ գեղագիտական ընկալումը: Բնությունը դառնում է հոգատարության և աշխատանքի առարկա: Աշակերտը ուսումնասիրում է բնության օրինաչափությունը, բնական միջավայրը, որտեղ կարող է հանգստանալ, ժամանակ անցկացնել, պահպանել բնության կանոնները: Հետևաբար աշակերտը բնության նկատմամբ պետք է ունենա գիտակցված և պատասխանատու վերաբերմունք, արժևորի բնության դերը:

Մարդկության առջև ծառացած ամենաբարդ հիմնախնդիրը բնության և հասարակության դինամիկ հավասարակշռության պահպանությունն է: Բնությունը ենթարկվել է այնպիսի անողոք հարձակման, ինչպես երբեք չի եղել: Մարդն անխնա օգտագործում է հազարամյակներով կուտակած բնական հարստությունները՝ հողը ենթարկվում է քայքայման, փոխվում է երկրի լանդշաֆտը, ջրային հարստությունը, մթնոլորտի բաղադրությունը և սրանք սպառնում են ներկա քաղաքակրթությանը: Այս ամենը կառավարելու համար մարդուց պահանջվում է մեծ ջանքեր, կարգավորելու բնության հետ հարաբերությունը:

Այսօր դժվար է կանխագուշակել, թե մարդուն վրա հասնող աղետը առաջինը որտեղից կարող է գալ՝ օզոնային շերտի քայքայումից, որը երկրի

ուլտրամանուշակագույն ճառագայթներից պաշտպանող վահանի դեր է կատարում, թե՞ երկրի ջերմոցային էֆեկտից, թե՞ ջերմաստիճանի բարձրացումից, թե՞աղետալի ջրհեղեղներից: Երկիրը վեր է ածվել աղբանոցի անտառների հատումից, որը շնչառության համար անհրաժեշտ թթվածին է մատակարարում, օդի բաղադրությունը կարգավորում: Այս ամենը բերում է հողի անապատացման, օդի թունվորման և առաջացնում է բազմատեսակ հիվանդություններ: Ամեն օր երկիր վրա վերանում է կենդանիների մեկ տեսակ: Մարդու կողմից տարբեր ճանապարհներով կենդանի տեսակների վերացումը, ուղղակի ոչնչացումը, ապրելատեղի ոչնչացումը, շրջակա միջավայրի աղտոտումը հանգեցնում են լուրջ հետևանքների: Դրա համար մեզանից յուրաքանչյուրը պետք է դպրոցից դաստիարակի երեխային բնության նկատմամբ սեր և հարգանք: Այս բարդ իրավիճակից դուրս գալու համար պահանջվում է էկոլոգիացնել մարդկային գործունեության բոլոր ոլորտները՝ քաղաքականությունն ու միջպետական հարաբերությունները, հասարակությունը, կրթության ու գիտության համակարգերը:

Մարդկային գործունեության բոլոր ոլորտների էկոլոգիացումը ենթադրում է բնական գործընթացների ավելի խորն ըմբռնում, մարդու կողմից շրջակա միջավայրում կատարվող փոփոխությունների հետևանքների կանխագուշակում: Բնության և հասարակության բարդ փոխհարաբերությունների ներկա էտապում բնության պահպանության, բնական հարաբերությունների օգտագործման հարցը մղվում է առաջին պլան և դառնում ազգային գլխավոր խնդիր, որի հաջող լուծումը պահանջում է ազգաբնակչության էկոլոգիական, բնապահպանական գիտելիքների կտրուկ բարձրացում: Հանրապետությունում առաջին հերթին աշակերտների շրջանում բնության մասին նոր մտածելակերպ պետք է ձևավորվի, որը կնպաստի ոչ միայն չափավորելու բնության վրա մարդու ներգործունեությունը, այլև կանխելու բոլոր տեսակի միջամտությունները, որոնք բացասաբար կազդեն շրջակա միջավայրի վրա. <<Եթե մարդը ցանկանում է որևէ հարցում բնության հետ ընդհանուր համաձայնության գալ, ապա մեծ մասամբ նա ստիպված է ընդունել նրա պայմանները>>. Ռ. Ռիկլես:

Շրջապատող միջավայրում կյանքը կարող է գոյություն ունենալ որոշակի պայմանների շրջանակում: Գիտության, տեխնիկայի զարգացման, ազգաբնակչության

նյութական, հոգևոր ու գեղագիտական պահանջների անընդհանուր աճի ու բարելավման արդի պայմաններում շրջապատող, միջավայրի պահպանման ու բնական պաշարների ռացիոնալ օգտագործման պրոբլեմը ձեռք է բերել կարևոր նշանակություն: Մարդն իր գործունեությամբ ակտիվորեն ազդում է շրջապատող բնական միջավայրի վրա, և այն կարող է ունենալ դրական, բացասական հետևանքներ: Մարդիկ կատարել են կարևոր գործեր՝ չորացրել են ճահիճներ, ոռոգել անապատային հողեր, ձորեր, լեռնալանջեր են կանաչապատել, գյուղերում ու քաղաքներում ստեղծել անտառագոտիներ: Բայց մարդկային արտադրական գործունեությունը միաժամանակ լուրջ վտանգ կարող է սպառնալ շրջապատող միջավայրին, եթե չպահպանվի շրջակա միջավայրի վրա մարդու գործունեության բացասական հետևանքների կանխումը: Փոքր տարիքից երեխան պետք է գնահատի իրեն շրջապատող աշխարհը, մտածի շրջակա միջավայրի պահպանության մասին: Շրջակա միջավայրի պահպանության հիմնական խնդիրներից է շրջակա միջավայրի բնական վիճակի պահպանումը, վերականգնումը, բնական պաշարների խելամիտ օգտագործումը, շրջակա միջավայրի վրա ֆիզիկաքիմիական, կենսաբանական և այլ վնասակար ազդեցությունների նվազեցումն ու կանխումը: Շրջակա միջավայրի վրա բնածին և մարդահատույց ներգործունեության էկոլոգիական հետևանքների վերլուծությունը կատարվում է շրջակա միջավայրի որակի պահպանման և բնակչության էկոլոգիական անվտանգության ապահովման նպատակով:

Շրջակա միջավայրը ներկայացնում է անձի՝ մարդ-բնություն-հասարակություն կապը: Մարդու գիտակցության մեջ բնության նկատմամբ սերն ու հարգանքը ստեղծվում է դաստիարակության և կրթության միջոցով: Շրջակա միջավայրի նկատմամբ անձի մեջ ձևավորվում է մի գիտակցություն, աշխարհահայացք և նրա կողմից էկոլոգիական կուլտուրայի յուրացման գործընթացում, որը հիմնված է մարդու կողմից հասարակություն–բնություն համակարգում իր տեղի և նրա դիալեկտիկական զարգացման իմացության վրա, և որպես հոգեկան արտակարգ երևույթ՝ անմիջապես կապված է սուբյեկտի սոցիալական գործունեության հետ: Մարդու մոտ ձևավորվում է աշխարհի մասին ընդհանուր պատկերացումներ, որոնց շնորհիվ նա ճշգրտում է իր դերն ու տեղը բնության մեջ: Այս գործընթացում կարևոր դեր է խաղում անձի մարդ-բնություն-հասարակություն համակարգի մասին եղած

հայացքների համակարգը, որտեղ վճռական և կարգավորող գործոնը, անհատի արժեքային վերաբերմունքն է: Բնության և հասարակության միջև եղած ներդաշնակ հարաբերությունների ձևավորումը պահանջում է ներդաշնակ զարգացած անհատի դաստիարակություն:

Շրջակա միջավայրի նկատմամբ ուշադրությունը աշակերտների էկոլոգիական դաստիարակությունն է և այդ գործընթացի իրականացման համար կարևոր դեր է խաղում անձի ակտիվ կենսադիրքորոշումը, որը միայն բնության մասին եղած որոշակի հայացքների միասնությունը չէ, այլ գոյություն ունի հարցի առարկայական կողմը և այն առնչվում է մարդու անմիջական գործունեության հետ՝ կապված մարդ-բնություն- հասարակություն համակարգում եղած փոփոխությունների օպտիմալացման հետ: Բնության պահպանության կարողությունների և հմտությունների ձևավորումը իր մեջ դաստիարակչական մեծ բովանդակություն է պարունակում: Էկոլոգիական դաստիարակությունը կարևոր գործոն է նաև անձի կողմից բնության և հասարակության փոխհարաբերության՝ սոցիալ-էկոլոգիական իդեալի ըմբռնման համար, որն իր հերթին ենթադրում է բարոյակամային որակների, համոզմունքների, բնության նկատմամբ պատասխանատվության ձևավորում:

Էկոլոգիական դաստիարակության խնդիրը բազմասպեկտային է և նրա բացահայատման մեթոդական հիմքը դպրոցից աշխարհայացքի ձևավորումն է: Հաշվի առնելով բնակլիմայական պայմանները, տեղային ավանդույթներն ու սովորությունները՝ էկոլոգիական գիտակցության ամբողջ ուսումնասիրումը ու բնութագրումը հնարավորություն կտա ավելի նպատակային կազմակերպել էկոլոգիական կրթությունը: Էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես դաստիարակության ընդհանուր համակարգի բաղադրամաս, ուղղված է դպրոցականների համակողմանի զարգացմանը և գիտական աշխարհայացքի ձևավորմանը, այնքանով, որ այն անձի գիտակցության և հոգևոր միասնության հիմքն է, քանի որ հայեցակարգային առումով մտնում է անձի գիտական աշխարհայացքի կառուցվածքի մեջ: Անձի համակողմանի զարգացման բարդ հյուսվածքում գիտական աշխարհայացքի ձևավորումն ունի իր առանձնահատուկ դերը և հնարավորություն է տալիս նրան վերախմբավորել սոցիալական ակտիվ կենսադիրքի շուրջ՝ գործնական, իմացական, հոգևոր և հուզագնահատողական նպատակով, ինչպես նաև որոշում է

անձի ուղղվածության բնույթը:

Գիտական աշխարհայացքի ձևավորման գործընթացը՝ որպես դաստիարակության հիմք, կոչված է ամրապնդելու անհատի էկոլոգիական դաստիարակության բազան: Կարելի է ասել, որ սոցիալ-էկոլոգիական իդեալը՝ որպես բնական միջավայր և հասարակության փոխազդեցության վերաբերյալ որոշակի կայունություն, մտնում է անձի աշխարհայացքի բովանդակության մեջ: Աշակերտի արժեքային կողմնորոշումները բնության նկատմամբ ունեն սոցիալական նշանակություն: Վերաբերմունքը դեպի բնություն, նրա արժեքավորումը, այդ թվում մարդու տարաբնույթ պահանջմունքների բավարարումը՝ իմացական, բարոյական, գեղագիտական, գործնական և այլն: Մարդու կենսափորձը և արժեքային կողմնորոշումները փոխկապակցված են և բնութագրում են մարդու հասունացումը՝ որպես անձ: Մարդու էկոլոգիական կուլտուրան նրա բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի պատասխանատվությունն է: Այն իրականություն դարձնելու համար դպրոցից, ընտանիքից, ողջ հասարակությունից պետք է տանել ամենօրյա նպատակաուղղված աշխատանք: Առաջին հերթին զինել համապատասխան գիտելիքներով: Օրինակ՝ գիտելիքներ բնության և հասարակության կապի, գիտելիք բնության գոյության անհրաժեշտության, գիտելիք՝ բնության հավասարակշռության պահպանության, էկոլոգիական արժեքների, բնությունից օգտվելու և պահպանելու, բնական ռեսուրսների օգտագործման, բնական աղետների և այլնի մասին: Այս ամենը ուսուցիչներից պահանջում է կատարել մեծ աշխատանք:

Բնության հավասարակշռության պահպանության համար դպրոցականներն ամենուրեք պետք է պահպանեն առողջական մաքրություն: Չաղտոտեն գետերը, լճերը, աղբյուրները, հողը, մթնոլորտը, շրջակա միջավայրը, չկտրեն մատղաշ ծառերը, այգիները, անտառներում կրակ չվառեն և այլն: Ներկայումս խիստ անհրաժեշտ է դպրոցներում ունենալ հողերի, գետերի, լճերի մաքրության, բուսական, կենդանական աշխարհը պահպանող ջոկատներ: Յուրաքանչյուր ուսումնական տարի դպրոցների ղեկավարությանը ներկայացնել գրավոր հաշվետվություն կատարած աշխատանքների մասին:

Հասարակության զարգացման առաջընթացը ավելի մեծ մասշտաբով է վերափոխում բնությունը՝ մեծացնելով մարդու ազդեցությունը վերջինիս նկատմամբ:

Բայց միշտ չէ, որ մարդը, նվաճելով բնությունը, մտահոգվում է դրա բացասական հետևանքներով, որոնք առայժմ մեծ չափերի են հասել: Ոռոգելով անապատները, փոխելով գետի հոսանքը, չորացնելով ճահիճները, մարդը փոխում է նաև կյանքի կլիմայական պայմանները: Կլիմայի վրա անուղղակի ազդեցություն է թողնում նաև արտադրությունը, քանի որ ածխի, նավթի ու տորֆի այրման ժամանակ տարեկան մթնոլորտ է բարձրանում մոտ 1.5 միլիարդ տոննա ածխածին, իսկ օդում ածխածնի պարունակությունից է կախված երկրի մակերեսի ջերմությունը: Արդյունաբերական ձեռնարկությունները թափում են գետերը, լճերը ու ծովերն զանազան նյութեր ու նավթամթերքներ: Այդ իսկ պատճառով ջրերը աստիճանաբար կորցնում են թթվածինը, որը հանգեցնում է կենդանական աշխարհի ոչնչացմանը: Օդի, ջրի աղտոտվելը, արդյունաբերական մնացուկները, ռադիոակտիվ նյութերն ու այլ նյութեր սպառնալիք են ստեղծում մարդու գոյության համար: Մարդ պետք է ապրի բնության հետ լիակատար համաձայնության և համերաշխության մեջ, պետք է զգուշանա բնության չափազանց լիակատար և ամբողջական վերափոխումից և օգտագործումից, քանի որ դա կարող է հետագայում բացասաբար անդրադառնալ նրա էկոլոգիայի վրա: Յուրաքանչյուր մարդ պատասխանատվություն է կրում բնության պահպանման համար, քանի որ ամեն մեկը իր հնարավորությունների և ուժերի սահմաններում կարող է աջակցել բնության թեկուզ շատ աննշան մի անկյան պահպանմանը և բազմացմանը: Մարդկանց անհատական ջանքերից, գումարից է կախված բնության պահպանումը և մարդու գոյության համար բնական միջավայրի ապահովումը: Իրավացի է ասված, որ մարդու համար բնությունը և՛ արհեստանոց է, և՛ տաճար, իսկ մարդը նրանում և՛ ակտիվ աշխատավոր է, և՛ հրապուրված պաշտող:

Նվաճելով բնությունը մարդը պետք է ամեն կերպ ձգտի ոչ թե ոչնչացնել բնությունը, այլ իրականացնել մարդկության երազանքը՝ լիակատար ներդաշնակության մեջ մտնել բնության հետ: Գյոթեն ասել է. <<Բնությունը չի սիրում կատակներ, այն միշտ ճշմարիտ է, միշտ լուրջ, նա միշտ ճիշտ է, սխալները և թյուրիմացությունները գալիս են մարդուց>>:

Բնութագրելով մարդու հարաբերությունը բնության նկատմամբ, մարդկանց նկատմամբ, ինքն իր նկատմամբ՝ հետազոտողները հատուկ նշել են, որ էկոլոգիական կուլտուրա գիտակցություն, զգացմունքներ և վարքագիծ ունեցող մարդկանց մոտ կա

ներդաշնակություն, իսկ նրանց վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ ներծծված է մարդասիրությամբ: Դպրոցականների էկոլոգիական կուլտուրայի էությունը վերլուծելիս պետք է առաջնորդվել նրանով, որ այն հանդիսանում է մարդկային կուլտուրայի տեսակետներից մեկը: Ժամանակակից գիտական գրականության մեջ <<կուլտուրա>> հասկացությունը ընդունվում է որպես մարդու գոյության, կենսագործունեության միջոց: Դա նշանակում է, որ էկոլոգիական կուլտուրան մարդու գոյության միջոց է, նրա կենցաղը՝ էկոլոգիական առումով: <<Էկոլոգիական կուլտուրա>> հասկացության տարբեր բնութագրումներից՝ մենք գտնում ենք, որ էկոլոգիական կուլտուրայի հիմքը համարվում է անձի էկոլոգիական ուղղվածությունը և նրա հասարակական կուլտուրայի մի մասը: Այն իրենից ներկայացնում է ամբողջական համակարգ, որը բաղկացած է հետևյալ փոխկապակցված տարրերից.

1. Գիտելիքների համակարգ (բնագիտական, արժեքային, գործնական)
2. Էկոլոգիական գիտակցություն
3. Համոզմունքների համակարգ, որը արտացոլում է էկոլոգիական կուլտուրայի աշխարահայացքային մակարդակը
4. Գործնական կարողությունների և հմտությունների համակարգը
5. Էկոլոգիական վարքագծի կուլտուրա

Դա նշանակում է նրանց մոտ խնայողապաշպանողական վերաբերմունք դաստիարակել բնության նկատմամբ, գաղափար տալ նրանց բնության պահպանման անհրաժեշտության և հարստացման մասին: Հանրապետական դպրոցի առջև խնդիր է դրված հաղթահարել էկոլոգիական դաստիարակության բնագավառում տեղ գտած թերությունները, որպեսզի աճող սերունդը սովորի բնության հետ ապրել ներդաշնակ: Առաջնահերթ հարցը այս խնդրում վերաբերվում է բնության նկատմամբ գիտական գիտելիքների ձեռքբերման, բնությունը միասնության և բազմանտեսակության մեջ տեսնելու հարցին: Այս ամենին հասնելու համար սովորողների մոտ պետք է դաստիարակել հայրենասիրությունը, հուզականությունը, կարեկցանքը, գեղեցիկը զգալու զգացմուներ՝ նրանց հոգեկան ներաշխարհի վրա ներազդելու միջոցով:

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ընդհանուր նպատակը ներառում է հմտությունների, վերաբերմունքների արժեքային համակարգի ձևավորումը,

արդյունավետ հաղորդակցվելու, համագործակցության պատասխանատու վարքագիծ, քաղաքացիական ակտիվ դիրքորոշումը: Իրականում մեր բոլորի նպատակը բնության հանդեպ երեխաների վերաբերմունքը փոխելն է, որովհետև երկիրն այնտեղն է, ուր նրանք ապրում են, և ուրիշ երկիր չի տրվելու նրանց: Նրանք են, որ մեծանալով պիտի կարողանան պայքարել երկիրն աղտոտվելու և դանդաղ ոչնչացնելու այսօրվա գործելակերպի դեմ: Պետք է կարողանանք նրանց սովորեցնել ծառ տնկել, հոգ տանել կենդանիների մասին, հիանալ դաշտային ծաղիկներով, թռչուններով, ոչ թե հալածել,այլ պահպանել այն ամենը, ինչը մեզ տվել է բնությունը: Անձի զարգացումը երկարատև գործընթաց է: Երեխաները մանկապարտեզն ավարտելուց հետո մտնում են դպրոց, այստեղ փոխվում է նրանց կյանքի ռիթմը, կրճատվում քնի տևողությունը, փոխվում օրվա ռեժիմը: Երեխաները որոշ չափով դառնում են ինքնուրույն: Նրանց կյանքը սկսվում է կարգավորվել մի շարք այնպիսի կանոններով, որոնք իրենց պարտավորեցնում են հետևել: Երեխաները առաջին դասարանում անցնում են մայրենի, մաթեմատիկա, տեխնոլոգիա, կերպարվեստ, ֆիզկուլտուրա առարկաները: Երկրորդ դասարանից անցնում են <<Ես և շրջակա աշխարհը>> առարկան, որը իրենից ներկայացնում է բնական և հասարակական գիտությունների հիմքը: Այս առարկայի օգնությամբ երեխան ծանոթանում է բնական, սոցիալական երևույթներին, որը օգնում է նաև ուսումնասիրել էկոլոգիական հարցերը և ձևավորում է անձի պատասխանատվությունը, դաստիարակությունը և դրանց հետ կապված այլ հիմնախնդիրներ: 7-10 տարեկան հասակում հիմք է դրվում սոցիալական պատկանելիության զգացումի ձևավորմանը, համագործակցությանը, փոխըմբռմանը, մարդու իրավունքների հիմնախնդիրների ճանաչմանը:

Ուսումնական գործընթացում քննարկվող հիմնական թեմա է դառնում յուրաքանչյուրի նկատմամբ արդարացի վերաբերմունքը, սեփական արժանապատվության զգացումը, հանդուրժողականությունը շրջապատի մարդկանց նկատմամբ: Երեխան պետք է հասկանա, որ միայն այս դեպքում կարելի է կառուցել բարեկեցիկ, արժանապատիվ ապագա՝ պատասխանատվություն կրելով իր անձի, ընտանիքի, համայնքի զարգացման համար: Անտուան դը Սենտ Էկզյուպերիի <<Փոքրիկ իշխանը>> գրքում կարդում ենք խոսքը վարդի մասին: Փոքրիկ իշխանը ասում է. <<Ես իմ վարդի համար պատասխանատու եմ, որովհետև ես նրան տվել եմ

իմ ամբողջ հոգին, ես եմ նրան խնամել>>: Յուրաքանչյուր աշակերտ պետք է պատասխանատու լինի իր արարքի համար, որը կնպաստի մարդ-անհատի ձևավորմանը: Երեխաների՝ որպես անձի պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդներից կարելի է առանձնացնել հետևյալ մեթոդները՝

1. Կոնֆլիկտային իրավիճակների քննարկում
2. Ստեղծագործական աշխատանքների կատարում, ներկայացում
3. Բանավեճեր, դերային խաղեր
4. Նկարների, ֆիլմերի դիտումներ
5. Աշխատանքների կատարում թվային տեխնոլոգիաների կիրառմամբ
6. Իրավիճակների դիտարկում, վերլուծություն
7. Գործնական և փորձարարական ինքնուրույն աշխատանքների կատարում
8. Երևույթների դիտարկում, մեկնաբանում
9. Տեղանքի ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն
10. Ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում

Օրինակ՝ նկարների, ֆիլմերի դիտումներ, քննարկումներ: Ֆիլմեր երկրաշարժերի, հրդեհների, վարարած գետերի և շրջապատում եղած այլ վտանգների մասին: Ֆիլմը դիտելուց հետո երեխաները կկատարեն քննարկումներ և կկարողանան բացատրել՝ ինչպես կողմնորոշվել այս դժվարին իրավիճակում, ինչպես օգնել դասընկերներին:

Այստեղ աշխատում է մյուս մեթոդը՝

Իրավիճակների դիտարկում, վերլուծություն - Կկարողանան ճիշտ գնահատել իրավիճակը, հասկանալ՝ ինչու խախտվեց բնության հավասարակշռությունը, որ աշխատանքները կնպաստեն իրավիճակի վերահսկմանը: Երեխաները կտեղեկանան իրենց տարածքում իրականացվող բնապահպանական միջոցառումների մասին:

Կոնֆլիկտային իրավիճակների քննարկում – Երեխաները այս մեթոդը ուսումնասիրելիս պետք է կարևորեն բարեկիրթ հաղորդակցությունը կոնֆլիկտներից խուսափելու համար, հասկանան արարքների և հետևանքների կապը:

Դասարանում կարելի է խմբային աշխատանքներ կազմակերպել խմբերի բաժանելով, գտնել լուծման բանալին: Բաժանվել 2 խմբի, առաջին խումբը կգրի օգնող

բարեկիրթ խոսելաձևին օգնող բառեր, իսկ երկրորդ խումբը՝ խանգարող բառեր: Առաջին խումբը դերերով կներկայացնի բարեկրթության կանոնները, երկրորդ խումբը նույնը կկատարի ստեղծելով կոնֆլիկտային իրավիճակ: Առաջին խումբը օգնում է երկրորդին գտնել հաշտության եզրեր և բոլորը միասին ձեռք-ձեռքի տված կկազմեն շրջան ուսուցչի հետ և կերգեն մի գեղեցիկ երգ դպրոցի, ընկերության մասին:

Այս պարագայում գործնական, խմբային և ինքնուրույն աշխատանքները ավելի շատ են օգնում երեխաներին կողմնորոշվել ցանկացած իրավիճակում, եթե նրանց ուսուցիչը ցույց է տալիս ճիշտ ուղղություն: Աշակերտներից որևէ մեկը իր կատարած օրինակելի արարքը կարող է ներկայացնել դասարանին և կազմակերպել քննարկումներ, որտեղ կգնահատվի արարքը և կխրախուսվի աշակերտը: Օրինակելի արարք՝ ծառ տնկել, խնամել ծանր դրության մեջ հայտնված ընկերոջը, թռչուններին, կենդանիներին: Հասկանալ՝ ինչ ասել <<արարք>>, կարողանալ տարբերակել լավն ու վատը:

Երեխաները պետք է գիտակցեն կենդանի և անկենդան բնության փոխկապվածությունը:

Երեխաները կկանգնեն շրջանաձև, երեխաներին բաժանել ծառերի, կենդանիների, արևի, հողի, ջրի նկարներ:

Ծառեր- բուսական աշխարհ

Կենդանիներ- կենդանական աշխարհ

Արևի, հողի, ջրի նկարներ- անկենդան աշխարհ

Երեխաներին այս խաղը կօգնի, որ հասկանան բնության մեջ ինչ է տեղի ունենում, երբ խախտվում է հավասարակշռությունը:

Առաջին քայլը <<Չկա՛ արև>>, նստում է 3 խումբը, մյուս երեխաները նույնպես նստում են, որովհետև շրջանը թուլանում է, <<Ջուր չկա՛>> թուլանում է շրջանը և երեխաները հասկանում են, որ բնության մեջ ինչ-որ բան խախտվելուց, բնության հավասարակշռությունը խախտվում է:

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկան օգնում է ճանաչել հայրենի բնությունը: Յուրաքանչյուր աշակերտի խնդիրն է՝

1. Բնության բազմակողմանի արժեքների իմացությունը՝ որպես հասարակության նյութական և հոգևոր ներուժի աղբյուր

2. Բնության հետ շփվելու, այն գեղեցկացնելու, բարելավելու պահանջմունքների ձևավորում և զարգացում

3. Բնապահպանության և բնության արժևորումների ակտիվ կենսադիրքորոշման մշակում

4. Բնության նկատմամբ աշակերտների բարոյագեղագիտական վերաբերմունքի պատասխանատվության ձևավորում

Բնապահպանական դատիարակության նպատակը աշակերտի աշխարահայացքի ձևավորումն է, որտեղ նա դառնում է պատասխանատու անձ: Բնապահպանական գիտելիքների ձեռքբերումը ապահովում է միայն բազմաառարկայական կապերի և գիտելիքների ինտեգրման միջոցով: Երեխաները ակտիվ մասնակցություն պետք է ունենան բնապահպանողական հասարակական օգտակար գործունեությանը: Այսօր անհրաժեշտ է, որ աշակերտը իրական օգնություն ցույց տա բնության վերաբերյալ իր արժեքային կողմնորոշումների հստակեցման ուղղությամբ, որպեսզի հնարավոր լինի հաղթահարել բնական միջավայրի հետևանքները: Աշակերտը պետք է ըմբռնի, որ մարդու հոգևոր կյանքը սերտորեն փոխկապված է բնության հետ, իսկ նրա հետ ներդաշնակ հարաբերության ձևավորումը գեղագիտական և բարոյական դաստիարակության խնդիրներից է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկան մեծ հորիզոններ է բացում երեխաների համար: Նրանք հնարավորություն են ունենում ավելի լավ ճանաչել շրջապատող աշխարհը: Երեխան պետք է պատասխանատու լինի իր յուրաքանչյուր քայլ կատարելիս: Նա միշտ պետք է համագործակցի դասընկերների հետ: Այսօր մարդիկ գործունեության շնորհիվ խախտել են բնության մեջ հավասարակշռությունը, որը սպառնալիք է դարձել շրջակա միջավայրի համար:

Մարդիկ կտրվել են բնությունից՝ անտառներ են ոչնչացնում ազդելով բուսական, կենդանական աշխարհի վրա, կեղտոտում են գետերի, ծովերի ջրերը լցնելով թունավոր թափոններ, այսինքն բնության մեջ խախտվում է հավասարակշռությունը: Երկրից անհետանում են բույսեր, կենդանիներ, պակասում է խմելու ջրի պաշարները:

Երկրագնդի գոյատևմանը լուրջ վտանգ է սպառնում: Մենք կարող ենք նպաստել, որ աշակերտները հասնեն այն գիտակցությանը, որ մարդը ոչ թե վեր է բնությունից այլ բնության մի մասնիկն է, որ մեր բոլորի վրա կա մի մեծ պատասխանատվություն՝ ուշադիր լինել մեր երկրի բնահամակարգի պաշարների նկատմամբ:

Աշակերտը պետք է գնահատի իր և մյուսների աշխատանքը, հաջողությունները, կարողանա համագործակցել, ընդունել համակեցության կանոնները: Տարբերակի դրականը ու բացասականը, ձևավորի պատասխանատու վարք: Գիտակցի սեփական դերը համայնքի բարելավման գործում, արժևորի ընկերական հարաբերությունների դերը իրենց կյանքում, վստահություն դասընկերների շրջանում: Երեխաները հասկանան իրենց շրջապատող մարդկանց տարբեր դերերի և աշխատանքների կարևորությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն., Ես և շրջակա աշխարհը, 3-4-րդ դասարան, Երևան, 2021, 88 էջ:
2. Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն. և ուրիշներ, Կյանքի հմտություններ, Ձեռնարկներ ուսուցիչների համար: 1-5-րդ դասարաններ: «Մակմիլան-Արմենիա»: 2001-2003: 117 էջ:
3. Նալբանդյան Մ.Է., Ամազարյան Ա.Ն., Խաղի մեթոդի կիրառումը <<Ես և շրջակա աշխարհը>> դասընթացին, Գիտական տեղեկագիր, 2020.1, էջ 255-264:
4. Տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի չափորոշիչ և ծրագիր (2-4-րդ դասարաններ): Հոդված N 1, ՀՀ ԿԳ նախարարություն: «Մակմիլան-Արմենիա»: 2012: 80 էջ:
5. https://edumedia-depot.gei.de/
6. http://shsu.am/media/journal/2020n1b/23.pdf